**Ուղղութունը. Ֆինանսներ, բակալավրիատ, հեռակա ուսուցում**

**Առարկա. Ֆինանսական հաշվառում**

**<u>Անոտացիա</u>**

**Աշխատատարությունը՝** *8 կրեդիտ, 288 ակադեմիական ժամ*

**Քննություն**

*Համառոտ նկարագրություն.* «Ֆինանսական հաշվառում» դասընթացի ուսումնասիրման առարկան է միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվողականության կազմման տեսությունն ու պրակտիկան: Դասընթացի խնդիրն է ուսանողների մոտ տեսական և գործնական գիտելիքների ձևավորումը ֆինանսական հաշվառման ոլորտում:

Խորհուրդ է տրվում դասընթացի ուսումնասիրման հետևյալ հաջորդականությունը՝ ծանոթանալ դասընթացի ծրագրին, մշակել ուսումնական նյութն ըստ դասագրքերի և դասախոսությունների, ամսագրերում հրատարակությունների, գրականության, նորմատիվ փաստաթղթերի, հաշվապահական հաշվառման ստանդարտների:

Գիտելիքների խորացման և ամրապնդման պարտադիր պայման է ուսանողների մասնակցությունը գործնական պարապմունքներին, ինչպես նաև տիպային խնդիրների, թեստերի լուծումը, և հիմնական ֆինանսական հաշվետվությունների կազմումը:

*Կապը ուսումնական պլանի այլ առարկաների հետ.* «Հաշվապահական հաշվառում և վերլուծություն» դասընթացը սերտորեն կապված է «Տնտեսագիտություն» դասընթացի հետևյալ առարկաների հետ՝ «Միկրոտնտեսագիտություն», «Ֆինանսական հաշվառում» և այլն: